ԱՂԲԻՒՐ

երեսունմէկերրորդ տարի 1913 № 12 Դեկտեմբեր

Խմբագիր-հրատարակիչ Տիգրան Նազարեան

Դպրոցական աշակերտների համար **ՏԱՐԱԶԻ** *25-ամեայ յոբելեանի առիթով* **ԱՂԲԻՒՐԻ** *տարեկան բաժանորդագինը* **ՄԷԿ** *րուբլի, իսկ* **ԱՂԲԻՒՐ ՏԱՐԱԶԻ** *բաժանորդագինը* **ՀԻՆԳ** *ր.*

ԵՐԵՔ ԵՂԵՒՆԻ

Անտառում կային
Երեք եղևնի,
Երեք սիրասուն
Քոյրեր նազելի։
Երբ հովն է փչում
Ու քամին շաչում —
Երեք քոյրերը
Իրար ականջում
Լուռ փրափրսում են
Ու անուշ խօսում։
Զուգած, զարդարած
Ձմրան հանդերձով,
Մատղաշ ու կանաչ
Սուր ասեղներով,
Հրպարտ կանգնել են
Երեք քոյրերը,
Կանգնել են սիրուն
Եղևնիները։

Թէպէտ շատ ծառեր
Պատել են նըրանց,
Բայց երեք քոյրեր
Դըրկել են միմեանց...
Ա՜խ, ի՜նչ տըխուր է
Այս նեղ անտառում.
Խաւար ու լուռ է
Այս թաւուտներում։
Նրանք սպասում են,
Որ մարդ գայ անտառ,
Նըրանց այցելի,
Տանի լոյս-աշխարհ։

I

Ահա այդ եկաւ
Ծեր փայտահատը.
Անտառում զընգաց
Փայտըն պողպատը.

Դաժան գործիքով
Մեծ քոյրը խոցւեց,
Ազի արցունքով
Սրմատը օծւեց։
Ու փայտահատը
Դրրեց իր ուսին
Եւ ուրախ-ուրախ
Տարաւ եղևնին...

Ցրւրտ դեկտեմբեր էր,
Ձիւն էր ամեն կողմ.
Սուլում էր, փրչում
Ձիւնէ բուք ու հողմ.
Բայց ծառը շրքեղ
Սենեակում բազմած,
Ծաղկած գունագեղ,
Մոմով զարդարւած,
Հպարտ աստղերով
Փայլփլում էր նա,
Ոսկէ փոշիով
Պատած անթերնայ։
Միտը չէր բերում,
Որ քոյրերն այսօր
Խրւել, ցուրտ անտառում
Դողում են անզօր։

II

Աղքատ գիւղացին
Աշնան գիշերով
Ձեռին մի կացին
Անցաւ անտառով,
Տեսաւ եղևնու
Ձիգ, ոլորկ բունը,
Մըտածեց տանել
Նրրան իր տունը.
Տապալեց շուտով,
Քաշ տրւեց գիւղը,
Որ տախտակներով
Նորոգէ հիւղը.
Բայց քաղաք տարաւ,
Հիւանին վաճառեց,
Որը պինդ ու թաւ
Տախտակներ ձևեց.
Նոր տախտակներից
Ձինեցին դապաղ,
Հարուստ մեռելին
Պառկեցրին խաղաղ։
Նրան պատեցին
Թաւիշ-կերպասով
Ու զարդարեցին
Թարմ ծաղիկներով...
Ու տախտակները,
Դեռ տեղ չը հասած՝
Յիշեցին կեանքը
Անտառում անցած,
Երբ նրանք տխուր՝
Ըսպասում էին,
Բուք ու փոխրկից
Սարսրռում էին.
Բայց հիմա հանդարտ,
Ուսերի վրայ

Ուրախ ու հրապարա
Գընում են ճանապա,
Շեն էլ մրտածում՝
Ով է մեծարում—
Փայտէ անկողին,
Թէ նրա միջի դին...

III

Անտառումը, հին
Քոյրերից զրկւած,
Գանգնել էր վերջին
Քոյրր որբացած։
Նա երազում էր—
Պիտի գայ մի օր,
Երբ ինքն էլ տեսնի
Իր կեանքը բարօր...
Նա շատ էր տեսել,
Ինչպէս գարնանը
Անտառ էր մրտնում
Ծեր ջաղացպանը
Ու ամեն անգամ,
Տուն էր գառնում յետ
Ծառեր բաւական
Տանելով իր հետ։
Միամիտ ծառի
Մտքովը կանցնէր,
Որ կացնի բաժին
Ձուտ պիտի լինէր։
Ահա, զըրընգաց
Փայտեն մի կայծին,
Ու տապալւեց ցած
Կանաչ եղևնին։
Դեռ չէր էլ թմրել
Խեղճի թարմ վէրքը,
Երբ նրան բերին
Գետի եզերքը.
Հասակով երկար
Ափերին յենւած
Կամուրջ պիտ գառնար
Մէջքը կորացած...

IV

Օրեր սահեցին,
Ամիսներ անցան,
Ծառերի մասին
Խապառ մոռացան։
Մի ամառային
Խաղաղ երեկոյ
Անտառում երկար
Ման գալուց յետոյ՝
Երբ նկատեցի
Երեք կոճղերը,
Գիտնալ ուզեցի՝
Ո՞ւր են քոյրերը.
Ման եկայ,
Գրտայ,
Եւ ահա
Տեսայ.
1. Հարուստ մեծատան
Փայտնոցի միջին

Ընկած անկենդան
Քոյրն առաջին.
Շրքացել էին
Փայլուն կարդերը,
Կոտրրտւել էին
Կանաչ ճիւղերը.
Մենակ, աչքաթող
Նա տառապում էր,
Անցեալ օրերը
Յաւով յիշում էր:

2. Երկրորդ եղևնուն—
Թրչւոռ արարած...
Խռնաւ, մութ վիհը
Լոկ բաժին մընաց.
Փրթում է այնտեղ՝
Քոյրերին կարօտ,
Շը կայ լոյսի շող,
Շը կայ և թարմ օդ:

3. Իսկ երրորդ քոյրը
Իր տեղն է նախկին.
Արծաթի ջուրը
Դիպչում է կրծքին,
Ու գարնան-աշնան,
Երբ հեղեղները
Ջուրը քրշում են
Դէպի ափերը,
Շատ-շատ անցորդներ՝
Շը վարանելով՝
Անցնում են վրստահ
Ծառի վրայով.
Անցնում են, օրհնում
Հողը բարեբեր,
Որը իր գրկում
Ծառին էր սրնել.
Օրհնում են ծառը,
Որ այնտեղ աճեց,
Օրհնում են ձեռքը,
Որ նրրան բերեց:

Եւ ոտների տակ,
Ջրրի, փուշու մէջ
Սրնւում է ծառը
Այն մրտքով անշէջ,
Որ անյայտ տեղից
Լոյս աշխարհ բնկաւ
Եւ շատ շատերին
Պէտքական եղաւ:

Մարզօ

Ձմռան ճանկերում

Նկարագրեցէք այս պատկերի բովանդակութիւնը մի երես

ՔԱՂՑԱԾ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Այսօր առաւօտեան Ալմաստը վաղ վեր էր կացել և շալը ձեռքն առած տնէ-տուն ընկել ալիւր ճարելու համար. քիչ յետոյ էլ նրա մարդը՝ Սահակն էր վեր կացել, որպէսզի հարևաններից մի կերպ փող ճարի՝ հարկը տալու և ալիւր գնելու համար։ Տանը մնացել էին փոքրիկ երեխայքը։

Խրճիթի մէջ, խոնաւ գետնի վրայ գզգզած անկողնին էր փուած, որի մէջ պառկած էին Ալմաստի և Սահակի երեխաները։ Նոր բարձրացող արևը նեղլիկ երդիկից աղօտ կերպով լուսաւորել էր խրճիթը։ Տան մէջ մեռելային լռութիւն էր թագաւորում։

«Աղէ», անկողնի մէջ նստելով՝ յանկարծ ձայն տուեց փոքրիկ Գարեգինը. «Աղէ, այ աղէ», կանչեց նա, տեսնելով, որ մայրը պատասխան չի տալիս. բայց երբ այս անգամ էլ մօր ձայնը չը լսեցաւ, Գարեգինը դէմքը կնճռեց և սկսեց բարձրաձայն լաց լինել,

մերթ ընդ մերթ «աղէ, այ աղէ» կանչելով։ Նրա ձայնից միւս երեխայք էլ վեր կացան և քնաթաթախ նստելով անկողնի մէջ, ձայնակցեցին իրենց եղբօրը։

Այդ միջոցին դատարկ շալը ձեռքին ներս մտաւ Ալմաստը։

«Աղէ, խաց», ձայն տւեց Գարեգինը։

— Աղէ, անօթի եմ,—կանչեց Աբրամը։

«Խաց, աղէ, խաց», միաբերան ձայն տւեցին Հայկն ու Ծովիկը։

Խեղճ Ալմաստը չէր իմանում ինչ անէր. տաշտը դատարկ էր, մինչև անգամ հացի փշրանք էլ չը կար, որ մանուկներին մի կերպ խաբէր՝ ձայնէրը կտրէր. խօսքն էլ ազդեցութիւն չէր անում. քաղցած փորին խօսքն ինչ կանի։

«Ի՞նչ անեմ, բալէքս», ճարը կտրած ասում էր Ալմաստը, «տաշտը դատարկ ա, խաց չը կայ. մէ քիչ է անօթի մնացէք՝ տէնանք Աստւած ինչ դուռ ա բանում»։

— Խաց, աղէ, խաց,—միաբերան կանչում էին քաղցած մանուկները։

— Աղէ, ախար իրիկունն էլ խաց չենք կերել, —ասաց Գարեգինը միւսների լացի և կոծի միջից։

«Ա՛խ, բալայ ջան», գլուխը շարժելով ասաց խեղճ մայրը. «դուք իրիկունը խաց չէք կերել, ես իսկի երէկ առաւօտն էլ խաց չեմ կերել. իմ բերանից կտրել եմ, պահել ձեզի համար»։

Մանուկները լաց էին լինում և շարունակ «խաց, խաց» կանչում։

«Մի լացէք, բալէքս. լաց լինելով ինչ կը թափի, ամին գնացել ա փող ճարի, որ թէ խարջը տանք, թէ մէ քանի լիդր ալուր առնենք. հէնց որ ալուրն առանք, խմոր կը շաղեմ, թաժայ խաց կը թխեմ ձեզի համար»։

Քաղցած մանուկներն իսկի ականջ էլ չէին

դնում մօրը, շարունակում էին աղիողորմ ողբալ՝ «խաց» կանչելով։

Խեղճ մայրը նրանց մէկ-մէկ հանեց անկողնից, շորերը հագցրեց, երեսները լւաց, համբուրեց և նստեցրեց տան անկիւնում փուած խորի վրայ։ Երեխայք ձայնները չէին կտրում։

«Դէհ, բաւական ա լաց լինէք, բալէքս», ասաց վերջապէս մայրը. «ձէններդ կտրէ՛ք, էս ա գնում եմ հարևաններից մի երկու խաց փոխ բերեմ, մինչև ալուր կառնենք ու թաժայ խաց կը թխենք»։

Ասաց ու դուրս գնաց։

Քիչ յետոյ փոքրիկ երեխայք ձայնները կտրեցին և աչքները մօր ճանապարհին յառեցին. այն միտքը, թէ շուտով մայրը հաց կը բերի, աննկարագրելի հրճւանք էր պատճառում նրանց։

— Ես մէկ սաղ խաց պէտք է առնեմ,—ասում էր Գարեգինը։

— Ես էլ սաղ կառնեմ, դէհ,—ասում էր Ծովիկը։

— Ես էլ, ես էլ,—միաբերան ասացին Գարեգինը և Արամը։

Անցաւ կէս ժամ. մանուկները անհամբեր սպասում էին մօր գալուն. նրանց թւում էր, թէ հիմա դռնից ներս կը մտնի մայրը՝ մէկ դաստակ հաց ձեռքին։ Բայց մայրն. ուշանում էր։

Արևը բաւականին բարձրացել էր. դրսից լսւում էր սոխակների անուշ դայլայլը. տան երդիկից արեւի շողքն ընկաւ մանուկների վրայ, որոնք մոռացան ամեն բան և սկսեցին շողքի հետ խաղալ. նրանք ձեռքերը բռնում էին շողքի առաջ և զանազան ձևի ստւերներ ձգում գետնի վրայ։

— Տեսէ՛ք, գէ՛լը, գէ՛լը,—ձայն էր տալիս Գարեգինը, ցոյց տալով ստւերը։ Միւս երեքը բարձրաձայն ծիծաղում էին։ Ո՛րքան քաղցր էր նրանց մանկական անմեղ դէմքերին փայլող ծիծաղը...

Երկար ժամանակ քաղցը մոռացած՝ նրանք հրճւում. էին արևի շողքով։

Դրսից ոտնաձայն լսւեցաւ։ Մանուկները կարծեցին, թէ մայրն է, հաց է բերում. տեղներից իսկոյն վեր թռան և դէպի տան դուռը վազեցին։ Այդ միջոցին ներս մտաւ Սահակը՝ տխուր դէմքով։ Մանուկները փաթաթւեցին հօրը։

— Ամի, աղէն գնացել ա խացի, հիմի կը գայ, — ասաց Ծովիկը։

— Ամի չան,— ասաց Գարեգինը. էսօր մեզի ալուր կառնես։

—Ա՛խ, բալայ չան,—հառաչելով ասաց Սահակը.—խարչը կարողանո՛ւմ ենք տալ, որ ալուր կարողանանք առնել։

— Ախար աղէն ասում էր, որ գնացել ես փող ճարես—,ասաց Գարեգինը։

— Բալայ չան, փողն ո՞վ ա դրել այնտեղ. իսկի կապէկ տւող կա՞յ։

— Ամի, մէկ կապէկ որ ըլնի, բաւական ա՞, —հարցրեց միամտութեամբ Արամը։

Հօր դէմքին տխուր ժպիտ փայլեց։

— Դեռ շատ ա, բալայ չան, ծիծաղելով—ասաց նա։

Այդ միջոցին ներս մտաւ նաև մայրը. երեխայք վազեցին դէպի նա և կախւեցին փէշերից։

— Վա՛խ, աչքերս քօռանան, բալէքս, խաց չը կայ. ինչքան ման էկայ, չը գտայ—ասաց մայրը.— հալբաթ ամին փող ճարած կը լինի, մէկ լիդը ալուր կառնի, էս սհաթին կը շաղեմ, թունդիրը կը վառեմ, թաժայ խաց կը թխեմ։

— Լա՛ւ մուրազ ա, թէ որ կատարւի, տխուր կերպով ասաց Սահակը։

— Ի՞նչէս՝ թէ որ կատարւի,—հարցրեց 22մած Ալմաստը։

— Էլ ի՞նչ թէ որ, սաղ գեղը ոտի տակ տւեցի,

մէկի ձեռից մէկ կապէկ չը պրծաւ. ըսէնց էլ քաֆը գեղ կըլնի՛։

— Էհէ, — բացականչեց Ալմաստը.— պրծանք գընաց. խարջ կիտողը մէկ կողմից, անօթուրթիւնը մէկ կողմից. դէհ ասա՝ մեր հոգին պիտի հանեն, էլի՛։

— Էսօր էլ կը հանեն, էգուց էլ, էլ որ գիւմանն չը կայ. ում տունը մտայ—խարջի համա՛ր ես էկել, իսկի մէկ կապէկ չը կայ, ասացին. ես էլ ձէն չէի հանում, փոր ու փոշման դուրս էի գալիս։

— Ամի՛, անօթի ենք, խա՛յ,— միաբերան կանչում էին սոված մանուկները։

— Ամին դուրբա՛ն ըլի ձեզի, բալէքս, ի՞նչ անեմ,— ասում էր խեղճ հայրը։

— Ծա՛յ տուր, խա՛յ,— կանչում էին մանուկները լալով։

— Սահակ,— յանկարծ լսեց բակի դրանից մի որոտագին ձայն։ Այդ ձայնը Սահակին ծանօթ էր. խեղճը ողջ մարմնով դողաց. հարկահանն էր կանչողը։

— Եկայ, եկայ,— ձայն տւեց շշմած Սահակը և դուրս վազեց։

— Ծարջը բեր,— լսեց տան դրան մօտ հարկահանի խրոխտ ձայնը։

— Թաթոս Ջան,— ասաց Սահակը հարկահանին,— գիտաս, որ գիւմանս մէկ կապէկ չը կայ. դունէդուռ ընկայ, արի չարի՝ քաֆը հարուստները մէկ կապէկ չը տւին. ի՞նչ անեմ. մէկ երկու օր համբերիր, եօնշէս քաշել եմ, կը ծախեմ, փողը կը տամ խարջի տեղ։ Հիմի ո՞րտեղից տամ։

— Այ քեզ որտեղից տամ,— ասաց հարկահանը, մտրակի մի ուժգին հարւած հասցնելով Սահակի մէջքին։— Ախմախ,— շարունակեց նա,— կնկադ շորերը ծախիր, էս րոպէին խարջը տուր։

— Հարկահանը կրկին մտրակեց Սահակին։

— Ամա՛ն, ամի՛ Ջան,— ձայն տւեցին փոքրիկ ե-

բեխայք և լեղապատառ կախ ընկան հօր փէշերից։

— Բալէ՛ք, ձեր հօրն ապանում են...

— Քեզի ասում եմ խարչը բեր,— գոռում էր հարկահանը։

— Թաթիս չան, այ քեզ դուրբան,— աղաչելով ասաց Սահակը,— թող ինձայ էգուց, բալքի մէկ ճար անեմ։

— Էգուց-մէգուց չեմ իմանում,— բարկացած վրայ տւեց Թաթոսը.— ամեն օր էգուցւան ես գցում։

Եւ Սահակին մտրակելով հրեց բակից դուրս։

Ցար. Պետրոսեան

Փոխադարձ օգնութիւն

Այս պատկերի նկարագրողը, եթէ Ագթիւրի մի երեսից աւելի չը լինի և տպագրւի Մանկական աշխարհում կը ստանայ ամբողջ 1914 թ. Ագթիւրը իբրև մրցանակ։

Մանկաղի երգը

Վարի, վարի, այ իմ գութան, փորի սիրտը չոր հողի. վարի անվախ ու անսասան. փայտ չէ ծայրը քո խոփի։

Սովը մեզ է լոկ պաշարել. բալաս ոնց է՝ տես՝ լալիս... տաշտի հացն է ողջ սպառել. փորը կուշտ չէ իմ բալիս։

Լսէ, գութան, մօրս լացը. «Ցորեն չը կայ հո-րում էլ... Մեր էսբուայ էն չոր հացը քոյը Հու-ռուց եմ փոխ առել»։

Վարի, գութան, մի ծուլանա, վարի դաշտը մեր խոպան... թող որ փափկի, թող որ դառնայ սերմի համար պէտքական։

Հինգ զոյգ եղներ եմ քեզ լծել. դէ, իմ գութան, շուտ վարի. դանակդ էլ լաւ եմ սրել. պարտքից փրկէ այս տարի։

Արիւն – շահով պարտք եմ արել Աղա – խօջից սերմացուն, տնով-տեղով նրան գերւել, յոյս դրել Աստծուն։

Չէ՞որ խօջան իր միւդաթը տասնապատիկ պիտ հաշւի... և մինչ նորեկ կալավախտը մեր արիւնը լաւ ծծի...

Վարի, վարի, այ իմ գութան, ճեղքիր սիրտը սև հողի. վարի արնոտ մեր էս վաթան. սուր է ծայրը քո խոփի...

Միսակ Ց. Պետրոսեան

ՔԱՆԴԻՍԾ ՔԱՐԱԹՈՒՄԲ

(Ռուսերէնից)

II

«Ընկան սուրհանդակները ծովի անդունդը, ալիքների մօտ, ծերունի ալիքներին պատերազմի կանչելու։

«Ալևոր ալիքները մռայլ դէմքով գլխները թափ են տալիս։

— Չը կայ մեր մէջ զօրութիւն, չը կայ մեր մէջ եռանդ։ Ի՞նչպէս կարող ենք մենք ժայռերին դէմ կանգնել։

«Սլացան առաջ սուրհանդակ ալիքները մայր մրրկին, հայր փոթորկին գտնելու համար։

«Տակն ու վրայ արին ծովի երեսը. չը կան նրանք. նրանք գտան սարերի մէջ խոր ընկած ձորերում։

— Ողջունով և բարևով, մեր ծնողներ, մենք ալիքների կողմից սուրհանդակներ ենք ուղարկւած։ Թողէք դուք ձեր ձորերը և թռէք դէպի ծով, կոտրտեցէք մեր եղբարց ամօթալի շղթան։ Ներշնչեցէք ծերունի ալիքներին վառ հոգի և ազատութեան ծարաւ։ Ժողովեցէք դուք ահարկու զօրախմբեր և ուղղեցէք նրանց միասիրտ խմբով ժայռերի դէմ։ Մեզ սոսկալի չէ պատերազմը, մենք մահից չենք վախում, ուզում ենք միայն փրկել մեր եղբարց ազատութիւնը։

«Դղրդաց մայր մրրկի սիրտը, հայր փոթորկի սիրտը կրակ կտրաւ։ Սուրհանդակների խօսքերը յիշեցրին նրանց անցած բարի ժամանակները։

«Փայփայող հայեացքով գուրգուրեցին նրանք երիտա-

սարդ սուրհանդակներին։ Լեռնային ձորերից դէպի անսահման ծովը ահեղ գոչիւնով սլանում է ուրախալի լուրը՝

—գալիս ենք, մենք գալիս ենք ազատութիւնը փրկելու համար։ Բարձրացէք, զօրեղ ալիքներ, չախչախեցէք ազատութեան կապանքները, այդ արգելքները քար ու քանդ արէք։

«Ահեղ էր այդ գոչիւնը. նա քնածներին էլ արթնացնում էր, ծերերին երիտասարդ էր դարձնում, քաջութիւն և աշխոյժ էր ազդում։

«Բարձրացան ալիքները և շտապում են առաջ, պատերազմի կոչին հնազանդ։

«Երբ առաջին անգամ լսեց ահեղ գոչիւնը, խոր գիշեր էր ծովի երեսին, սև ամպեր էին պատել ամեն կողմ։

«Արևելքից արևմուտք, հարաւից հիւսիս շտապում էին ալիքները, կանոնաւոր զօրագնդեր էին կազմում։

«Մատաղ ալիքները քաջութիւնով վառուած, յարձակւող զօրագնդերի առաջն էին կանգնած։

«Որոտալով, մրրկալի սլացան ալիքները ծովի երեսով. փոթորիկը նրանց օգնելու է շտապում։ Մռնչաց մրրիկը, գոռգոռաց փոթորիկը...

«Բանակը ոտքի է կանգնել...

—Յառաջ, հզօր ալիքներ... «Մահ կամ յաղթութիւն» կուի գոչիւնով դէպի մռայլ քարաթումբը յարձակւեցան։

«Թնդացին մռայլ ժայռերը... Ալիքները հապճեպ առաջ են գնում... Կրծքերը խփում են ժայռերին և փուշում են անշունչ... Արիւնով շաղախւեցան ժայռերը, անվեհեր մարտիկների արիւնով։

«Հառաչում է մայր մրրիկը՝ «որդիքս, հարազատ որդիքս ընկնողների մէջ առաջիններն են։ Դեռ շատ կընկնէք, որդիք, սակայն այսօր մենք պէտք է տապալենք թշնամուն»։

«Ծովը եփ է գալիս...

«Ընկածների տեղը նոր ալիքներ են առաջանում... Ո՜րքան նրանք զարհուրելի են, երբ ահեղ են...

«Դղրդիւնով, գոռգոռալով սուր ժայռերին են դիպ-

չում, ետ են թռչում, նորէն յարձակւում են և մեռնելիս եղբարց օգնութեան են կանչում։

«Ծայրերը ամուր են կանգնած, սակայն մոայլւած։ Սրտերը պնդած սլանում են ալիքները առաջ և վերջ չը կայ նրանց, սահման չը կայ ահեղ ալիքներին...

«Ծովը ափերից ետ գնաց, բոլոր ալիքները բանակի մէջ մտան։ Հառաչանք և գոռոց է պատել ծովի երեսին...

«Որպէս զօրեղ առիւծներ, ալեզարդ ալիքները փոքրերին օգնութեան վազեցին։ Սփռեցին ծովի երեսին իրանց սպիտակ խոպոպները, գետինը դղրդաց չորս կողմից, և ալիքները սոսկալի թափով յարձակւեցին ժայռերի վրայ։

«Արդէն լուսացել է մոխրագոյն մոայլ առաւօտը։ Բոլոր ժայռերը կանգնած են անյողդողդ... Շարունակ սուլում է մրրիկը ալիքների գլխին, իսկ ալիքները շարունակ ընկնում և ընկնում են, սուր-սուր ապառաժների վրայ կրծքերը ջարդելով։

«Մարդիկ հաւաքւեցին սարսափահար։ Մոայլւած են նայում ձկնորսները, թէ ինչպէս են տապալւում քաջարի ալիքները, որպէս թւում էր, անհաւասար պատերազմի մէջ։ Յաւից սիրտ էր կտրատւում, վշտացած մարդիկ արտասւում էին ու մաղթում էին Աստծուն, որ շուտով պատերազմին վերջ տայ, ալիքներին յաղթութիւն չնորհէ։

«Ինքն իսկ չարասիրտ րոնակալ մարդը, որ քարաթումբը ծովի դէմ էր բարձրացրել, սոսկաց հիմա։ Դղրդաց նրա կոշտ սիրտը, տեսնելով ծովի ցաւերը և կորուստը։ Ո՜հ, ինչ հրճւանքով նա կը հեռացնէր ապառաժները և ալիքներին կրկին ազատութիւն կը տար...

«Սակայն ուշ է... Ալիքները այլևս չեն արտասւում, նրանք չեն պաղատում... Այստեղ արդէն շատ եռանդ է կորել, շատ քաղցր է սպանւածների ոխը հանելը... և մոայլւած, քաջասրտութիւնով, ահեղ մրրկի գոռոցի հետ յարձակւեցին փառահեղ ապառաժի վրայ... Զգում են ամենքը, որ կամ կը տապալեն նրանք սառնասիրտ ժայռերին, կամ ծովը գերեզման կը դառնայ...

«Համաչափ քայլերով, անվեհեր սրտով ալիքները առաջ են գնում։ Ճակատ առ ճակատ նրանք քարաթումբին սոսկալի հարւած տւին։ Դղրդացին ժայռերը զարհուրելի հարւածից... Ալիքները սրտապնդւեցին, ետ-ետ քաշւեցին և անզուսպ կատաղութիւնով կրկին վրայ տւին... Կուի մէջ ամեն ինչ իրար խառնւեց։ Մովի երեսին հառաչանք և գրոհ է տիրում, թւում էր, թէ ծովը յատակից բարձրացաւ, երկնքի հետ միացաւ, և փուլ եկաւ քարաթումբը...

«Վերջին հարւածից ժայռերը դողդողացին և ադմկալի դոռոցով գլորւեցին ծովի անդունդը, ուր սպանւած ալիքներն էին փուլած։

— Հեռու, գարշելի դիակներ—տապալւած ժայռերին ձայն է տալիս ծովը—այստեղ ազատութեան անվեհերը մարտիկների գերեզմանն է, այստեղ մատղաշ ալիքներն են ընկած։

«Բացւեց ծովի յատակը, և ժայռերը անէծքով գլորւեցին ծովի անդունդը...

— Մխթէ մեր մեղքն էր։ Ալիքներին պարծանք, իսկ մեզ յաւիտենական խայտառակութիւն ամօթալի գործի համար։

«Հրճւում է անեզր ծովը։ Նա ընկճեց թշնամու ահեղ զօրութիւնը։ Ալիքները սահում են ազատ և փառաբանում են զոհւած մարտիկներին, նրանց, որ իրանց մատաղ կեանքով վերադարձրին երբարց ազատութիւնը...

«Փառք ընկածներին,

«Ազատութիւն կենդանի մնացածներին»։

* * *

Ես նստել էի այդ անմահ ժողովրդական սւանդուրթիւնից հիացած... Սիրտս զբաււած նայում էի այժ և հզօր քաջասրտութիւնով շնչող ալիքների վրայ։

Իմ գլխի վերևը երկնքի կապտագոյն կամարն է տարածւած, իմ ոտքերի տակ մայիսեան պայծառ արևի ճառագայթներով լուսաւորւած անեզր ծովը։

Հեռւից լսւում է քաղաքի մէջ տիրող կեանքի աղմուկը, խղճալի զոհունակութեան քրքիջ, երևում է սև ծուխ, լսւում է շոգեանների շաչիւն և հառաչանք, ողբալի հառաչանք...

. . . . . .

Եւ թւում էր ինձ, թէ այնտեղ՝ հեռւում, հեռւում, կապտագոյն ծովի այն կողմը մրրիկ է գոռում....

Ո՜հ, մարդիկ, խղճալի, խղճալի մարդիկ...

Գ. Զալալեան

ԱՄԱՆՈՐԻ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

ԴՈՆԻ ԱՓԻՆ

—

Առաւօտ էր՝ պարզ, սիրուն առաւօտ.
Կանգնած էի ես Դոն գետի ափին.
Թախծոտ էր սիրտս, տխուր ու խանդոտ
Նայում էի մեղմ օրօրուող նաւին

Հովիկ էր փչում, ինձ շոյում հեռուից
Եւ անհետ գնում, կորչում էր հեռուում,

Արևն էլ փայլում, այրում էր երկնից,
Ծխուր էր սիրտս, տխուր ու տրտում։

Յառած աչքերով նայեցի գետին.
Հանգիստ էր գետը, խաղաղ ու անդորը,
Եւ կարծես հեռուում կանգնած նաւակին
Նա մեղմ, ծփալով, ասում էր օրօր։

Բայց արևոտ սիրտս լիքն էր վէրքերով.
Վշտեր ու թախիծ տիրել էին սրտիս.
Չը կար մէկը... որ անուշ խօսքերով
Դարդից ու ցաւից ազատէր հոգիս։

Վարդան Բոնաքեան

Խրատ մանուկներին

Տարիները անցան, սիրուն մանուկներ, ծերուկիս ձայնը ձեզ էլ չը հասաւ. ով գիտէ վաղուց դուք էլ ձեր մտքից հանել էք նրան ու չէք հարցնում, թէ նա ինչ եղաւ, կամ նրա գլխին ինչ փորձանք եկաւ։

Դուք չէք մեղաւորը, իմ աչքի լոյսեր, ես եմ մեղաւորը, որ հոգուս խորքում վիշտ ունենալով, ձեռս չէր զօրում գրիչ առնելու, ձեզ մեր ցաւերը մի-մի պատմելու։

Էհ, ձեզ ինչ ասեմ, իմ բարեկամներ. կեանքը միշտ մարդուն քաղցր չէ ժըպտում,—լոյս, պայծառ օրին յաջորդում է միշտ գիշերը խաւար, ուրախ ժամերին՝ վիշտ ու արտասուք, ցաւերը անհամար...

Շատ են մեր ցաւերը, սիրուն մանուկներ. ես որը պատմեմ կամ որը թողնեմ. միայն այս կասեմ—մեր ցաւի դարմանը դուք էք, սիրելիք, դուք էք մեր յոյսը. մեր նեղ օրերի նեցուկն ու պաշտպան, դուք պիտի ծլիք, պտկիք ու ծաղկիք, ձեր անուշ պտղով քիմը պարարէք թէ ձեր ծնողաց թէ համայն ազգին։

Պտուղ մտաւոր ու արդար վաստակ, համեստ նիստ ու կաց, կեանք առաքինի, սէր դէպ ձեր ընկերը, սէր դէպ ծնողներ, յարգանք մեծերին, յարգանք այն անձանց, որ հարթում են ձեզ ուղիղ ճանապարհ, այս պիտի լինի ձեր նշանաբան։

Հեշտ է, սիրելիք, այդ ամենն անել, միայն կամք է պէտք, եռանդ, աշխատանք, և կիրագործւի դրւած նպատակ։

Ահա գալիս է շուտով նոր տարին,
Մեր վառ յոյսերի մի նորեկ շրջան,
Ուխտենք ամենքս, սիրուն մանուկներ,
Բարի գործերի կանգնել միշտ պաշտպան։

Ծերուկ

ՍԱՐՍԱՓԵԼԻ ՓՇՇԱՆԳ

I.

«Ա՛ռ, պաւակս, բռնիր լուցկին.
Ա՛ռ, մի վախիր, բռնիր տակին—
Փշշանգն արդէն պատրաստուած է,
Պատրոյգը վրան, տես, կախուած է»։

II.

«Վառուեց, պահե՛... Զգո՛յշ, բալա,
Թէ չէ կըմնի խաթաբալա...
Ըհը՛, ըհը՛, քիչ է ճնում.
Տես, պատրոյգի վերջն է այրւում»։

III.

Ֆշշանգը՝ ֆը՛շշ... Ու տրամակ
գլխարկին,
Թռցրեց վերև... վախեց որդին.
«Ա՛յ քեզ օյին. մեղայ Քեզ, Տէր»,
Գոչեց հայրը, նայելով վեր։

IV.

Գլխարկը տրամակ պայթեց վերև,
Թափեց ներքև հրեղէն անձրև.
Հայր ու որդի սարսափելով՝
Փախան դէպի տուն վազելով։

Յարութիւն Թումանեան

Մանկական թատրոն

Վ. ԱՅՎԱԶ.

ԼԵՈՆԻ ԴԱՏԸ

Մանկական պիէս 1 գործող.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Տիկին Կատարինէ
Լէոն — 13 տար.
Աշխէն — 11 տար.
Սաթիկ — 9 տար. } սրա որդիները։
Սոֆիա — հարևանուհի։

Տեսարանը—սովորական կահաւորուած սենեակ.

ՏԵՍԻԼ I.

Լէոն (նստած է մենակ և դասեր է սովորում. պատռա-ղա).—Օ՛, հոգիս դուրս եկաւ, գլուխս այնքան է խառնըւել, որ ոչինչ չեմ կարողանում սովորել։ Այս ինչ տանջանքի մէջ ընկայ—չորս կողմից նախատում են, բոլոր երեխաները ծիծաղում են իմ վրայ, իսկ քոյրերս բարկացնում են ինձ և ասում, թէ ինչ պատասխան պիտի տամ տիկին Սոֆիային, որ սպասել եմ նրանց կատւին. ինչ պատասխան՝ կասեմ, որ խաղում էի և քարը յանկարծ դիպաւ նրան, ու սատկեց։ (Պատռվա) Օ՛, Աստուած իմ, մէկ դրանից էլ ազատուէի, էլ ուրիշ ոչինչ չեմ ուզում։ (Ոտքի ձայն է գալիս. ականջ է դնում) Վայ, գալիս են, դուրս փախչեմ ու պարտիզում ծլկւեմ, քանի չեն եկել։ Օ՛, ամօթից կարմրում եմ։ (Փախչում է դուրս)։

ՏԵՍԻԼ II.

Սոֆիա (բարկացած).—Ես միայն այն կարող եմ ասել, որ դա ձեր որդու անչափ յիմարութիւնն է ու ձեր էլ անփութութիւնը, որ դուք թոյլ եք տալիս։ Ա՛խր ինչ կարող է դուրս գալ Լէոնից։ Ոչ, ես ինձ թոյլ չեմ տայ սպասելու. իմ խիղճն էլ է ինձ տանջում, երբ տեսնում եմ խեղճ երեխաներիս, որ լաց են լինում, իրանք էս չը գիտեն, թէ ինչպէս պահեն իրանց արժունքները—սպանած կատւի դիակը տեսնելիս։

Կատար.—Սոֆիա ջան, չէ՞ որ ես էլ գոհ չեմ, որ իմ որդին մի այդպիսի անախորժութիւն պատճառեց ձեզ, բայց ինչ արած, քանի որ եղածը անցել ։գնացել է։ Այժմ պիտի աշխատենք դրա առաջն առնել, որ այլ ևս չը կրկնւի։ Դու, ինչպէս հարևանուհի, նոյնպէս իրաւունք ունես, նոյնպէս պարտական ես ջանք գործ դնել, որ Լէոնը ուղղւի։ Նա լինելով քո մօտիկ հարևանի որդին, միևնոյն է, թէ քո որդին է։

Սոֆիա.—Դրան խօսք չը կայ, իհարկէ. (մտածում է) սպասիր, Կատարինէ, ես մի այնպիսի բան մտածեցի, որը կարող է նրան ուղղել։

Կատար.—Ի՞նչ։

Սոֆիա.—Ահա թէ ինչ. սա առաջին անգամը չէ, որ մենք խօսքերով կարողանանք Լէոնին համոզել. պէտք է մի այլ միջոց գործ դնել։ Այ թէ ինչ. ես կասեմ՝ իբր թէ դատարանը գանգատ եմ տւել մեր կատւին սպանելու համար, երբ Լէոնը լսէ դատարանի անունը, թէ կամաչէ, թէ կը քաշւի և կը զգայ իր արածների վնասակարութիւնը և թողնելով իր չարութիւնները, խելքի կը գայ։

Կատար.—Շատ շնորհակալ կը լինեմ քեզանից այն ժամանակ և տեսնելով Լէոնիս խելօքացած, միշտ պիտի յիշեմ քո արած բարութիւնը դէպի իմ գիժ որդին։

Սոֆիա.—Այո, այսպէս լաւ է. դէ, ուրեմն դու ասա Լէոնին, որ ես ձեր վրայ գանգատ եմ տւել։

Կատար.—Վայ, գլողը չը տանի քեզ, Սոֆիա, որքան բարի ես. անչափ շնորհակալ եմ։

Սոֆիա.—Է՛, առ այժմս ցտեսութիւն (գնում է)։

Կատար.—Ցտեսութիւն։ (Մենակ է) Ո՛հ, Աստուած իմ, որքան բարի է այս կինը, որ հոգ է տանում իմ գիւժ որդու համար։ Ո՛հ, հոգիս դուրս եկաւ։ Մէկ էլ տեսար գալիս են ու գանգատւում, թէ որդիդ մեր ապակին է կոտրել, Լէոնը մեր երեխային քարով խփել է։ Օ՛, չար է, անչափ չար է։

ՏԵՍԻԼ III.

Սաթիկ.—Մայրիկ, տիկին Սոֆիան ինչո՞ւ էր եկել։

Կատար.—Ձեր գործը չէ. դուք հանգիստ դասերդ սովորեցէք։

Աշխէն.—Մայրիկ, Լէոնի համար ի՞նչ էր ասում։

Կատար.—Ի՞նչ պիտի ասէ. դատարանը գանգատ է տւել մեր վրայ։

Սաթիկ.—Մայրիկ, ասա տիկին Սոֆիային, որ չանէ այդ բանը։

Աշխէն.—Այո՛, այո՛, մայրիկ։

Կատար.—Ի՞նչ կարող եմ անել, զաւակներս, ես ասացի նրան ինչ որ պէտք էր։

Սաթիկ.—Մայրիկ, Լէոնին բանտ կը տանեն։

Կատար.(կիսաժպիտ).—Ասացի, որ ձեր գործը չէ. դուք դասերդ սովորեցէք (կողմ). ես գնամ Լէոնի մօտ (գնում է)։

Աշխէն.—Սաթիկ, Լէոնը լսե՞լ է այդ բանը։

Սաթիկ.—Ո՞րտեղից պիտի լսէ. Աշխէն, Լէոնին բանտ կը տանեն, չէ՞։

Աշխէն.—Գիտե՞ս՝ մայրիկս մեզ ամեն օր ասում էր, որ խելօք ձեանք. չէ՞որ նա գիտէր, որ եթէ խելօք չը ձեանք, կարող էր այնպիսի բան դուրս գալ։ Հայրիկս էլ, երբ դեռ կենդանի էր, միշտ ասում էր, որ խելօք ձեանք և իրանց չը բարկացնենք։

Սաթիկ.—Հա՛, գիտեմ։

Աշխէն.—Դու ո՞րտեղից գիտես, քանի որ դեռ փոքր էիր։

Սաթիկ.—Հա՛, ինչո՞ւ չը գիտեմ. ես նրան լաւ եմ յիշում։

ՏԵՍԻԼ IV.

Լէոն (մտնում է պլուխը քաշ դցած, մի գիրք ձեռքին)։

Սաթիկ.—Մայրիկին տեսաք, Լէոն։

Աշխէն.—Գիտեմ, տիկին Սոֆիան գանգատ է տւել դատարանը, որ դու սպանել ես նրանց կատւին։

Լէոն.—Մայրիկն ինձ ասաց։

Սաթիկ.—Մայրիկը տիկին Սոֆիայի հետ խօսել է։

Աշխէն.—Նոր մայրիկս ինքը ասաւ։

Սաթիկ.—Հիմա ի՞նչ ես անելու։

Աշխէն.—Ի՞նչ պիտի անէ, բանտ կը գնայ ու կը նստի։

Լէոն (կիսալաց).—Հա, դու խակոյն վճռում ես։

Աշխէն.—Ի՞նչ, վախենում ես (ծիծաղում է)։

Լէոն (բարկացած).—Քո գործը չէ. դու մի խառնւի։

Սաթիկ.—Ձես ուզում, չենք խօսի, մեզ համար մէկ է. (ծափ տալով) չէ՞, Աշխէն։

Աշխէն.—Հա հա, մեր Լէոնը շատ է մտածում։

Լէոն.—Դուք իմ վրայ ծիծաղեցէք, (լալիս է) սպասեցէք մայրիկին ասեմ։

Սաթիկ.—Մայրիկը քեզ չի էլ լսի։

Լէոն.—Ո՞ւմ չի լսի։

Սաթիկ.—Քեզ, քեզ չի լսի, դու անպիտան ես։

Լէոն.—Ո՞վ է անպիտան. (բարկացած) հիմա ես քեզ անպիտան ցոյց կը տամ։

Սաթիկ.—Դու ես, դու, անպիտանը, վայրենի ծոյլ. (Լէոնը յարձակւում է)։

Աշխէն և Սաթիկ (միասին).—Մայրիկ, մայրիկ (դուրս են փախչում)։

Լէոն (գիրքը նրանց ետևից շպրտելով).—Ես ձեզ անպիտան ցոյց կը տամ... Այս ի՞նչ է. այս անպիտան ալջիկներն այնքան նեղացրին, որ գիրքս էլ նետեցի։ (վերցնում է) Այս ի՞նչ եղաւ, բոլորովին պատռւեց (լալիս է) ես ինչ...

ՏԵՍԻԼ V.

Կատաը. (մտնում է)—Այս ի՞նչ է, ի՞նչ է պատահել, որ լաց ես լինում։

Լէոն.—Մա... մա... մայ...րիկ (հեկեկում է)։

Կատար.—Իսկ գիրքդ ինչ է, ինչ ես արել։

Լէոն.—Աշխէնն ու Սաթիկն արին, մայրիկ։

Կատար.—Դու էլի չես մոռացել քո չարութիւնները. ես քեզ հազար անգամ եմ ասել, որ բաւական է ինչքան տանջեցիր. ախր այս բոլորը ինչ է նշանակում։ Հիմա ասա տեսնեմ, քո այս արածը լաւ բան է։ Քեզ տեղն է, Թող գանգատ անեն։

Լէոն (գլուխը քաշ գցած).—Ախր ես ինչ անեմ...

Կատար. (բարկացած).—Գլուխդ քարոզ ես տալ, ինչ պիտի անես. ասում են հանգիստ պահիր քեզ, իսկ դու չես հասկանում։ Ես շատ լաւ գիտեմ, որ մինչև մի բան ասած չը լինէիր Սաթենիկին կամ Աշխէնին, նըրանք քեզ երբէք չէին նեղացնի։ Ահա՝ նրանք գալիս են։

Տ ե ս ի լ VI

Աշխէն.—Մայրիկ, դու այստեղ ես. մենք քեզ էինք որոնում։

Կատար.—Ի՞նչ կայ. էլի ինչ է պատահել։

Սաթիկ (կիսալաց).—Մայրիկ, Լէոնը մեզ էլի ծեծեց։ (Այդ ժամանակ Աշխէնը բռունցքները իրար է խփում և ասում Լէոնին—«Օ՛խ, ճխ, մայրիկը քեզ կը ծեծի, սպասիր»)։

Կատար.—Լէոն, այս ինչ եմ լսում. հերիք չէ, դու քո չափն ու չւանը կորցրիր, դու մինչև այն տեղը պիտի հասցնես, որ խիստ կերպով պատժեմ։

Լէոն.—Մայրիկ (լացով)։

Սաթիկ.—Ծոյլ, փոխանակ դասերը սովորելու, չարութիւններ է անում։

Լէոն (լալիս է).—Սրանք միշտ ինձ նախատում են։

Սաթիկ եւ Աշխէն (ծիծաղելով).—Երեխայի պէս լաց է լինում։

Կատար.—Ամեն բանին լաց ես լինում, կարծես լացը քթիցդ կախ է, իսկ դուք աղջիկներ, կորէք ձեր գործին. (աղջիկները փախչում են բղաւելով. «Լալկան, լալկան»)։

Իսկ դու նստիր և փոխանակ լաց լինելու, դասերդ սովորիր. այսօր դուրս բոլորովին չը պիտի գնաս. (գնում է)։

Լէոն (մենակ, գիրքը առաջ քաշելով).—Ես այս ինչ յիմարութիւն արի, այս ինչ խենթութիւն էր, որ ընկերներիս մօտ պարծենալու համար սպանեցի տիկին Սոֆիայենց կատուին, որ այսօր բոլորը իմ դէմ են խօսում. իսկ վաղը... ես ինչ երեսով պիտի գնամ դասարան և նստեմ, ինչպէս ասում էր հօրեղբայրս, «մեղադրեալի նստարանի» վրայ։ Ո՛չ, ես կը խնդրեմ մայրիկիս, որ հաշտեցնէ, ես խօսք կը տամ, որ միշտ խելօք կնամ և դասերս պատրաստեմ, այն ժամանակ մայրիկս էլ ինձ կը սիրէ, և քոյրերս էլ վրաս չեն ծիծաղի։ (Մտածում է) Հիմա ինչպէս անեմ. Աստուած վկայ՝ ամաչում եմ, որ մայրիկիս հետ խօսեմ։ Ո՛չ, կը գնամ ուղղակի մայրիկիս մօտ և կը խնդրեմ, որ նա ինձ ների, տիկին Սոֆիայենցն էլ ներողութիւն կը խնդրեմ. (քիչ ուրախ) իսկ երբ նա էլ ինձ ներէ, ես այլ ևս այսպիսի յիմարութիւններ չեմ անիլ և դասերս լաւ կը սովորեմ, որ շուտով մոռանան։ Գնամ, գնամ մայրիկիս մօտ։ (Վազում է դուրս ղէպի ձ)։

ՏԵՍԻԼ VII

Աշխէն եւ Սաթիկ (մտնում են ձախ դռնից. Սաթիկը ձեռքին տիկնիկ, իսկ Աշխէնը—գնդակ)։

Աշխէն.—Սաթիկ, արի գնդակ խաղանք։

Սաթիկ.—Ոչ, ես տիկինիս շորերը պիտի հագցնեմ (հագցնում է)։

Աշխէն.—Սաթիկ, Լէոնի գիրքը այստեղ է, ինքը ուր է գնացել։

Սաթիկ.—Գլուխը քարը, ով է խաղում նրա հետ։

Աշխէն.—Ինչի՞, ինչո՞ւ չես խաղում։

Սաթիկ.—Նա ծոյլ է։

Աշխէն.—Իսկ դու դասերդ սովորել ես։

Սաթիկ.—Ես իմ ոտանաւորի միայն կէսն եմ սովորել։

Աշխէն.—Ես որ գիտեմ, ես որ գիտեմ (ծափ տալով)։

Սաթիկ.—Իմս հեշա է—«Բադիկն է»։

Աշխէն.—«Բադիկ, բադիկ, կարմիր թաթիկ, ուր ես վազում կամաց-կամաց»...

Սաթիկ.—Ոչ, ոչ, սխալեցիր, այդպէս չէ։

Աշխէն.—Ինչո՞ւ, ես քեզնից լաւ գիտեմ։

Սաթիկ.—Ինչպէ՞ս լաւ գիտես, որ փոխանակ ասելու «Բադիկ, բադիկ, կարմիր թաթիկ, ո՞ւր ես գնում կամաց-կամաց», դու ասում ես—«ուր ես վազում»։

Աշխէն.—Ոչ, մեր վարժապետը այդպէս է սովորեցրել։

Սաթիկ (գիրքը բաց է անում).—Տես, տես, այստեղ էլ իմ ասածի պէս է գրւած։

Աշխէն.—Դէ լաւ, Սաթիկ, թող այդ, արի խաղանք։

Սաթիկ.—Հա, գիտես, որ սխալը դու ես, ուզում ես ծածկադմփոց անես. հա... այդ ով է գալիս։

ՏԵՍԻԼ VIII

Լէոն (շտապով մտնում է և ուրախ).—Աշխէն, Սաթիկ, դուք այսուհետև ինձ հետ կը խաղաք։

Աշխէն.—Եթէ մեզ չես ծեծիլ, կը խաղանք։

Լէոն.—Ես մայրիկի մօտ էի. ես նրանից ներողութիւն խնդրեցի և խոստացայ, որ այլ ևս չարութիւն չը պիտի անեմ։

Սաթիկ.—Իսկ տիկին Սոֆիան։

Լէոն.—Հա, մայրիկս խոստացաւ, որ ասէ նրան։

Աշխէն.—Սաթիկ, արի մենք էլ գնանք մայրիկին խնդրենք, որ խօսի տիկին Սոֆիայի հետ։

Սաթիկ.—Գնանք, գնանք։

Աշխէն.—Լէոն, դու էլ արի մեզ հետ (գնում են)։

ՏԵՍԻԼ IX

Սոֆիա (մտնում է).—Այս ո՞ւր են գնացել այս տան տէրերը. ոչոք չի երևում, երևի հարևանուհիս խոհանոցումն է. իսկ երեխաները չէ՞որ պարտիզումն էլ չը կային։ Այժմս

Լէոնի սիրտը թփթփում է, բայց չը գիտէ, որ այս բոլորը սարքովի է։ Գնամ տեսնեմ ուր են գնացել (գնում է)։

Տ Ե Ս Ի Լ X

Լէոն (մտնում է կամաց քայլերով).—Կարծես թէ տիկին Սոֆիան այս կողմն էր գալիս. ես պատուհանից նկատեցի. չը լինի թէ մայրիկիս սենեակումն է (ականջ է դնում) ոչինչ չի լսւում, բա ուր գնաց... Ո՜հ, ինչպէս սիրտս դողում է, ամօթից չեմ կարողանում տեսնել նրա երեսը. (մտածում է) երբ նա ներս մտնի, ես դուրս կը գնամ... բայց չէ՞որ մայրս ասաց, որ տիկին Սոֆիայից էլ ներողութիւն խնդրեմ և ես էլ խոստացայ։ Ապա ինչ անեմ. (ականջ է դնում) կարծես այս կողմն են գալիս. նրա ձայնն է, ո՜հ, Աստուած իմ, ինչ անեմ. այո, նրա ձայնն է (մօտենում է դռանը)։ Այո, նա է, մայրիկիս հետ է խօսում, այս կողմն են գալիս։ Ես դուրս փախչեմ (փախչում է)։

Կատար. (մտնում է Սոֆիայի հետ).—Ոչ, նա դեռ ոչինչ չը գիտէ և հաւատում է։

Սոֆիա.—Ոչ, ոչ, պէտք է վերջապէս ասել նրան. մեղք է տղան, չարչարւում է։

Կատար.—Աստուած քեզ բարին տայ, Սոֆիա, շատ շնորհակալ եմ, որ այդպէս հոգս ես տանում իմ որդու վրայ։ Դա մեծ լաւութիւն է ինձ։

Սոֆիա (ժպտալով).—Իսկ ինչ է անում Լէոնը, խօսմ չէ՞ վախեցել։

Կատար.—Ոչ, թէև չի վախեցել, բայց շատ է մտածում և հասկացել է իր չարութիւնների չափը։

Սոֆիա.—Կանչիր նրան այստեղ։

Կատար (դռնից).—Լէոն, Լէոն, այստեղ արի (Լէոնը մտնում է, գլուխը կախ)։

Սոֆիա.—Լէոն, ինձ մօտ արի։

Կատար.—Մօտեցիր, Լէոն. (Լէոնը քիչ մօտենում է)։

Սոֆիա.—Գիտես ինչ, Լէոն, ես քեզ անչափ սիրում եմ, բայց երբ չարութիւններ ես անում, թէ իմ և թէ

մօրդ աչքիցը ընկնում ես, և ահա՝ ես քո լաւը ցանկանալով, եկել եմ քեզ ասելու, որ եթէ քո չարութիւնները կը թողնես, խելօք դասերդ կը սովորես, ես ահա՝ մայրիկիդ մօտ խօսք եմ տալիս, որ գանգատը դատարանից յետ կը վերցնեմ։ Դէ, ուրեմն ասա ինձ, ասա տեսնեմ, թէ խօսք կը տաս, ես քեզ կը ներեմ։

Կատար.—Տեսնում ես, Լէոն, տիկին Սոֆիան քեզ խօսք է տալիս, որ ներում է քեզ, ուրեմն հասկացիր, թէ նա որքան է սիրում քեզ. դէ, ներողութիւն խնդրիր և ձեռը համբուրիր։

Լէոն (քիչ մտածելով).—Ներեցէք ինձ, տիկին Սոֆիա, ես խօսք եմ տալիս, որ կատարեմ ձեր խրատները (մտածում է և ձեռը համբուրում)։

Սոֆիա.—Ապրես, զաւակս, ես յոյս ունիմ և վստահ եմ, որ դու երբէք չես մոռանայ իմ խրատները։ Դէ, ուրեմն գնա և հանգիստ սրտով դասերդ պատրաստիր և լաւ եղիր, որ լաւ էլ վարձատրւիս ծնողներիցդ։

Կատար.—Լսիր, Լէոն, տիկին Սոֆիան քեզ ներեց, իսկ դու պարտական ես նրա պատուէրները միշտ ճշտութեամբ կատարել, որով յարգած կը լինես նրան։

Լէոն.—Ներիր ինձ, մայր իմ, տիկին Սոֆիա, ես այսուհետև կաշխատեմ լինել լաւ, որ լաւ էլ վարձատրւիմ։

Կատար.—Ապրիս, Լէոնիկս, այժմս վազիր պարտէզ և քոյրերիդ յայտնիր, որ տիկին Սոֆիան ներեց քեզ։

Լէոն (վազում է բղաւելով).—Աշխէն, Սաթիկ...

Սոֆիա.—Ահա՝ այսպէս վերջացաւ «Լէոնի դասը»։

ՎՐԴՈՎԸ

Վ. Այ-վազ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երեք եղունի (բանաստեղծ.)	*Մարգօ*
Ձմռան ճանկերում	*Պատկեր*
Քաղցած մանուկներ	*Յար. Պետրոսեան*
Փոխադարձ օգնութիւն	*Պատկեր*
Մաճկալի երգը	*Մ. Յ. Պետրոսեան*
Քանդւած քարաթումբ (Ռուսերէնից)	*Կ. Չալալեան*
Նաւահանգստում	*Պատկեր*
Դոնի ափին	*Վարդ. Բունակեան*
Ուրախ մանուկներին	*Ծերուկ*
Սարսափելի փշանգ (բանաստեղծ.)	*Յար. Թումանեան*

ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Լէոնի դատը (Մանկական պիէս)	*Վ. Այ-վազ.*

Յ Ա Խ Ե Լ Ի Ա Ծ

Տօքի և Մալի (Հոֆմանի, վերջ)	*Գէորգ Հարխուդարեան*

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Աղբիւրի Նոր-տարւայ №-ը կուղարկի բացառապէս նրանց, որոնք վերանորոգած կը լինեն 1914 թ. համար իրանց բաժանորդագրութիւնը։

Զինջանելով շատ աշակերտների թախանձանքին առաջիկայ տարին, Տարազի քանհինգամեակի առիթով, Աղբիւրի բաժանորդագինը աշակերտների համար մէկ ր. է։ Սակայն ցանկալի է, որ Աղբիւրի բաժանորդ աշակերտները տանեան և իրանց ընտանիքի համար Տարազն էլ, որ աշակերտների հասցէով եւ առանց պրէմիաների 10 ր. փոխարէն 5 ր. է։

Տարազը հրատարակւում է շատ ընտիր թղթի վրայ (luxe) փարթամ և առանձին խնամքով։ Պրէմիաները թանգարժէք և յաւելւածները օգտակար։ Ուստի այն ընտանիքները, որոնք հնարաւորութիւն ունեն 10 ր. բաժանորդագին վճարելու, թող չը խնայեն 5 ր. աւելի տալու և ունենալու Աղբիւր-Տարազի պերճ (luxe) հրատարակութիւնը և թանգարժէք պրէմիաները։

Աղբիւրի ներկայ №-ի հետ ուղարկւում է Տօքի և Մալի վէպի վերջը և գրքի շապիկը։ Աղբիւրի նախորդ №№-ից պէտք է խնամքով պոկել Տօքի և Մալի վէպի թերթերը և միացնելով, կազմել, որ կըստացւի մի գեղեցիկ գիրք։

Առանձին այս գրքի գինը 1 րուբլի է։

Աղբիւրի բաժանորդները եթէ կամենան ստանալ 1914 թ. Գեղափնջիկ Ալմանախ-Օրացոյց 1914 թ. պէտք է ուղարկեն 50 կոպ.։

Աղբիւր-Տարազի բաժանորդները այդ պրէմիան ստանում են № 1-ի հետ նէյէր։

Հայցած է 1914 թ. բաժանորդագրութիւնը

32-րդ ՏԱՐԻ ԱՂԲԻՒՐ 1914 ՏԱՐԱԶ 25-րդ ՏԱՐԻ

— ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ —

Հայկական միակ էլիւստրասիօն **Տարազը** 1914 թ. թեւակոխում է ՅՈՒԲԵԼԵԱՆԱԿԱՆ 25-րդ տարին. եւ այդ առիթով նա առաջիկայ 1914 թ. դպրոցական աշակերտներին **ԱՂԲԻՒՐ** ամսագիրը նորից պիջանում է տարին ճանապարհածախսով հանդերձ **ՄԷԿ** **Աղբիւրի** դպրոցական աշակերտների համար **Տարազը** հրատարակել է ԱՂԲԻՒՐի թղթի վրայ և բաժանորդագինը Աղբիւր-Տարազի փոխանակ 10 ր. 5 ր., սակայն առանց պրէմիաների և յաւելուածների:

Յոբելեան **Տարազը** արտացոլում է հայկական և համաշխարհային Գրական-Քաղաքագիտական-Հասարակական-Գեղարուեստական **ՏԱՐԱԶԸ** հրատարակութեան: **Տարազը** թէ ներքին և թէ արտաքին քաղաքական կեանքը տարակուսում է շքեղ ու փարթամ: **Տարազի** թեմատիկ հմայիչ է, ուշագրաւ և բազմազան: **Տարազին** հրատապ №№-ի հատուածները հասնում է մինչև 3 ր.: **Տարազին** աշխատակցում են մեր և եւրոպական նշանաւոր արուեստագէտներ, գրականագէտներ, գիտնականներ: **Տարազը** համաշխարհային ժամանակի մէջ ճանաչուած է իբրև հոչակաւոր պարբերական հրատարակութիւն:

Տարազը հայկական միակ էլիւստրասիօնն է և հայութեան մէջ չունի մրցակից:

ԴՊՐՈՑ· ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Աղբիւրը տարեկան	12 №№	1 ր.
Տարազը »	» »	4 ր.
ԱՂԲԻՒՐ ՏԱՐԱԶ ԹԱՏՐՈՆ և ԵՐԱԺ.	»	5 ր.

LUXE ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԲԻՒՐ տարեկան	3 ր.
ՏԱՐԱԶ »	6 ր.
ԱՂԲԻՒՐ—ՏԱՐԱԶ Յաւելուածներով եւ պրէմիաներով »	10 ր.
Առաքահման (50 ֆր.)	18 ր.

Типографія „ГЕРМЕС“ Графская 6, Телефон 566.